

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՊՈՐՏԻ
 ԶԱՐԳԱՑՄԱՆ 2018-2022 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

№	Միջոցառումներ	Ակնկալվող արդյունքը	Կատարող կազմակերպությունը	Կատարման ժամկետը	Ֆինանսական աղբյուրը	Վերստուգելի չափանիշը
1	2	3	4	5	6	7
1.	Ըստ բնակության վայրի մանուկների և պատանիների ընդհանուր ֆիզիկական պատրաստականության և առողջարարական միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում	Ըստ բնակության վայրի խաղահրապարակների առկայություն՝ հագեցած պարզ տիպի մարզասարքերով (տարբեր բարձրության պտտածողեր, ճոճանակներ, զուգափայտեր, սահելու, մագլցման և ձգումների համակցված հարմարանքներ ու սարքեր և այլն)	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ)	2018-2022 թթ.	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	Յուրաքանչյուր տարի Երևանում և յուրաքանչյուր մարզում առնվազն 1 բազմաֆունկցիոնալ խաղահրապարակի ավելացում
2.	Տարեկան աշխատանքային ծրագրերով նախատեսված մարզական միջոցառումների կազմակերպում	Ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական միջոցառումների անցկացման միջոցով մանուկների և	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ մարզպետարաններ,	2018-2022 թթ.	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	Հնարավորինս շատ ֆիզկուլտուրային-առողջարարական և մարզական միջոցառումների անցկացում,

		պատանհների ֆիզիկական պատրաստվածության մակարդակի բարձրացում և առողջության ամրապնդում, ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու համար հնարավորությունների ընձեռում, սոցիալական հավասարության գործընթացի խթանում՝ հաշվի առնելով ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվողների շրջանում տղաների թվի գերակշռությունը՝ աղջիկների ընդգրկվածության խթանում	Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), մարզական հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)			մասնակիցների թվաքանակի ավելացում տարեկան առնվազն 10 %-ով
3.	Մանկապատանեկան սպորտի ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերով և ծրագրային փաստաթղթերով ապահովում	1) Մանկապատանեկան մարզադպրոցների համար միասնական ուսումնական ծրագրերի առկայություն՝ ըստ մարզածների և մարզման փուլերի 2) Մարզադպրոցի սաների՝ մարզական քոլեջ տեղափոխության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող համապատասխան իրավական ակտերի ընդունում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2018-2022 թթ.	Ֆինանսավորում չի պահանջվում	1) Տարեկան առնվազն 3-4 մարզածևի ուսումնական ծրագրի մշակում 2) Մարզադպրոց-քոլեջ մարզիկի տեղափոխության կարգի ստեղծում
4.	Մարզական նշանակության կառույցների կառուցում և	Վերանորոգված, հիմնանորոգված և նոր	ՀՀ սպորտի և երիտասարդության	2018-2022 թթ.	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ	Վերանորոգված և բարեկարգ

	վերանորոգում	կառուցված մարզակառույցներ՝ ապահովված նաև հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և ելքի համար անհրաժեշտ պայմաններով	հարցերի նախարարություն, ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտե, ՀՀ կրթության և գիտության նախարարություն		Ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	մարզակառույցների առկայություն՝ ըստ համապատասխան հայտերում ընդգրկված ցանկի
5.	ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական կազմակերպությունները մարզման ժամանակակից գույքով ապահովում	Մարզումների համար անհրաժեշտ ժամանակակից մարզական գույքով ապահովված մարզակառույցներ	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2019-2022 թթ.	ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	«ՀՀ մանկապատանեկան մարզադպրոցները, մարզաձևերի ազգային ֆեդերացիաները և այլ մարզական կազմակերպությունները գույքով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ
6.	Մարզադպրոցների մարզիչ-մանկավարժների վերապատրաստման դասընթացների, գործնական պարապմունքների շարունակական կազմակերպում	Հայաստանի Հանրապետությունում գործող մարզադպրոցների տարեկան շուրջ 180 վերապատրաստված և բարձր որակավորմամբ մարզիչ-մանկավարժներ, մարզադպրոցների ուսումնամարզական գործընթացի բարելավում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2018-2022 թթ.	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	Տարեկան շուրջ 180 մարզիչ-մանկավարժների վերապատրաստում
7.	Սպորտային բժշկության ասպարեզում նեղ մասնագետների վերապատրաստման աշխատանքների կազմակերպում	Մասնագետների ամենամյա վերապատրաստման դասընթացների կազմակերպում, նմանատիպ արտասահմանյան կազմակերպությունների հետ փորձի փոխանակում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	2018-2019 թթ.	ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, ՀՀ օրենքով չարգելված աղբյուրներ	Տարեկան առնվազն 2 նեղ մասնագիտական մասնագետների վերապատրաստում, մարզական կազմակերպություններում վերապատրաստված և բարձր որակավորմամբ

						սպորտային բժիշկների առկայություն
8.	Առողջ ապրելակերպի, օլիմպիական գաղափարների քարոզչություն	Գովազդային վահանակների, ցուցապաստառների, տեսահոլովակների, ինչպես նաև տպագիր և էլեկտրոնային զանգվածային լրատվական միջոցներով հանրությանը իրազեկում անցկացվող միջոցառումների մասին, առողջ կենսակերպի գովազդման միջոցով բնակչության լայն խավերին ֆիզկուլտուրայի և սպորտի պարապմունքներում ներգրավում, սպորտի՝ որպես ամուր ընտանիքի ֆիզիկական և հոգևոր առողջության կարևորագույն բաղադրիչի գովազդում	«Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, «Կրթության և գիտության նախարարություն, «Մարզպետարաններ, Երևանի քաղաքապետարան (համաձայնությամբ), տեղական ինքնակառավարման մարմիններ (համաձայնությամբ), մարզական հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)	2018-2022 թթ.	«Օրենքով չարգելված աղբյուրներ	«Մարզերում և Երևան քաղաքի 12 վարչական շրջաններում գովազդային վահանակների, ցուցապաստառների առկայություն, տեսահոլովակների, ինչպես նաև տպագիր և էլեկտրոնային զանգվածային լրատվական միջոցներով հանրությանը իրազեկում
9.	Դպրոցականների մասնակցություն համաշխարհային գիմնազիադաներին	Դպրոցահասակ երեխաների մասնակցության ապահովում խոշոր մարզական միջոցառումներին, մարզական արդյունքների բարելավում	«Կրթության և գիտության նախարարություն	2018-2022 թթ.	«Կետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում, «Օրենքով չարգելված աղբյուրներ	Համաշխարհային գիմնազիադաներին դպրոցականների փաստացի մասնակցություն

